Հավելված N3
«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և
սպորտի հայկական պետական ինստիտուտ»
հիմնադրամի ռեկտորի 2016թվականի
նոյեմբերի 24-ի N 51 հրամանի

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ

1. «Հայաստանի Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ ինստիտուտ) քաղաքացիական պաշտպանության (այսուհետ՝ ՔՊ) կանոնակարգը հիմք ընդունելով ՔՊ ոլորտին վերաբերվող իրավական ակտերը, կանոնակարգում է ինստիտուտի խնդիրները, գործառույթները, ղեկավար կազմի պատասխանատվությունը, աշխատակիցների իրավունքները, պարտականությունները և միջոցառումների իրականացման կարգը ՔՊ բնագավառում:
2. ՔՊ կազմակերպումը և իրականացումը ինստիտուտի կարևորագույն գործառույթներից մեկն է և աշխատողների անվտանգության ապահովման բաղկացուցիչ ու անբաժանելի մասն է:
3. ՔՊ բնագավառում ինստիտուտի խնդիրներն են.

3.1 արտակարգ իրավիճակներում և պատերազմի ժամանակ, իր լիազորությունների սահմաններում՝

ա) աշխատողների հուսալի պաշտպանության ապահովումը,

բ) ինստիտուտի կայուն աշխատանքի ապահովումը (անհրաժեշտության դեպքում),

գ) փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացմանը աջակցելը:

4. Ինստիտուտը ՔՊ խնդիրներին պատրաստվում է նախապես՝ խաղաղ պայմաններում:
5. Ինստիտուտի ՔՊ պետը ի պաշտոնե հանդիսանում է ինստիտուտի ռեկտորը, իսկ գործառույթների իրականացման պատասխանատուն՝ ռեկտորի կողմից նշանակված ՔՊ շտաբի պետը:
6. ՔՊ պետը իր իրավասության սահմաններում՝

ա) պատասխանատվություն է կրում ՔՊ պատրաստականության համար,

բ) կազմակերպում և ղեկավարում է ՔՊ միջոցառումների իրականացումը,

գ) հաստատում և գործողության մեջ է դնում ՔՊ պլանները,

դ) արձակում է ՔՊ վերաբերող որոշումներ, հրամաններ, հրահանգներ,

ե) վերահսկում է ՔՊ միջոցառումների կատարումը,

զ) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ:

7. Ինստիտուտի ՔՊ շտաբի պետի լիազորությունները և գործունեության կարգը սահմանվում է ՔՊ ոլորտը կանոնակարգող օրենսդրական ակտերով, ինչպես նաև ինստիտուտի կանոնադրությամբ, սույն կանոնակարգով և ինստիտուտի ղեկավար մարմինների որոշումներով:
8. ՔՊ ծառայությունը ի դեմս ՔՊ շտաբի պետի՝

ա) իրականացնում է աշխատողների պաշտպանությունը,
բ) ստեղծում է ՔՊ ուժեր,
գ) իրականացնում է կազմակերպության ՔՊ տարեկան հիմնական միջոցառումների
պլանով նախատեսված գործառույթները,
դ) կազմակերպում և իրականացնում է ՔՊ գծով անձնակազմի ուսուցում,
ե) իրականացնում են Հայաստանի Հանրապետության (ՀՀ) օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ:

9. ՀՀ քաղաքացի հանդիսացող ինստիտուտի աշխատողները, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, իրավունք ունեն՝

ա) ստանալ ճշգրիտ տեղեկություն իրենց պաշտպանվածության աստիճանի մասին,
բ) ստանալ ՔՊ միջոցառումների իրականացման հետևանքով կրած վնասների փոխհատուցում:

9.1. ՀՀ քաղաքացի հանդիսացող ինստիտուտի աշխատողները, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, պարտավոր են մասնակցել ՔՊ միջոցառումների իրականացմանը:

10. ՀՀ քաղաքացիություն չունեցող աշխատակիցները պարտավոր են կատարել ՔՊ միջոցառումների ուղղությամբ ՔՊ կառավարման մարմինների բոլոր ցուցումները: ՀՀ քաղաքացիություն չունեցող աշխատակիցները ՔՊ միջոցառումներում ներգրավվում են ,,Քաղաքացիական պաշտպանության մասին,, ՀՀ օրենքի և ՀՀ միջազգային պայմանագրերին համապատասխան:
11. Սույն կանոնակարգը ընդունվում, նրանում լրացումներ կամ փոփոխություններ կատարվում են ինստիտուտի ռեկտորատի որոշմամբ: